Կ.ՊՈԼՍԻ «ԱՐԵԼԵՔԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ» ՕԹՅԱԿԸ *

Ֆելիքս Մովսիսյան

Բանալի բառեր՝ *թանգիմաթ, բարեփոխումներ, առաջադիմություն, մասոնություն, միություն, համախմբում, արևմտահայություն, մտավորականություն, օթյակ:*

Մասոնությունը Օսմանյան կայսրություն մուտք է գործել բավական վաղ՝ 1720-ական թվականներին: Մեզ հասած տեղեկություններով առաջին մասոնական օթյակը հիմնադրվել է մոտավորապես 1721թ., Կ.Պոլսի Գալաթա աշտարակի հարևան թաղամասերում բնակվող լեվանտիացիների (հիմնականում ջենովացիների) կողմից [1]: 1738թ. մայիսին Լոնդոնում լույս տեսնող «St. Jame's Evening Post» թերթը հայտնում էր, որ մինչ Կ.Պոլսում մասոնական օթյակների ստեղծումը՝ դրանք ավելի վաղ, միմյանց հաջորդելով, հիմնվել են Զմյուռնիայում և Հալեպում[2]: 1748թ. փետրվարի 3-ին Կ.Պոլսում մի խումբ անգլիացի վաճառականներ անգլիական դեսպանատան թարգմանի տանը օթյակ են հիմնել, որը նպատակ էր հետապնդում մասոնության գաղափարները տարածելու հույների և հայերի շրջանում: 1768թ. Կ.Պոլսում հիմնվել են «Սուրբ Հովհաննես», իսկ Զմյուռնիայում՝ «Հաղթանակ» օթյակները, որոնք ենթարկվում էին ժնևի մեծ օթյակին: Կ.Պոլսում գործել է նաև լեհական «Զարոմադի արշալույս» օթյակը [3]:

Չնայած այս առանձին փաստերին՝ մասոնությունը Կ. Պոլսում տարածում գտավ հիմնականում 1850-ական թվականներին, երբ Արևելյան (Ղրիմի) պատերազմի ավարտից հետո եվրոպական հաղթող պետություններ Անգլիան և Ֆրանսիան 1856թ. մարտի 30-ի Փարիզի հաշտության պայմանագրով Օսմանյան կայսրությանը պարտադրեցին «եվրոպականացման» քաղաքականություն որդեգրել: «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների պահանջը և սուլթան Աբդուլ Մեջիդի հռչակած «Հաթթը հյումայուն» հրովարտակը Օսմանյան կայսրությունում սկիզբ դրեցին Թանզիմաթի երկրորդ փուլի: Սուլթանի հրովարտակը բազմաթիվ բարենորոգումներ էր խոստանում քրիստոնյա ժողովուրդների հասարակական, քաղաքական, կրթական և մշակութային կյանքում: Թանզիմաթի ընձեռած հնարավորությունից շտապեցին օգտվել անգլիական, ֆրանսիական, իտալական մասոնական մեծ օթյակները, որոնք ձեռնամուխ եղան ազատ որմնադիրների հիմնարար գաղափարների տարածմանը թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդների շրջանում: 1856-1862 թվականներին Կ.Պոլսում հիմնվեցին անգլիական «Արևելյան» («Oriental») թիվ 687, «Բուլվեր» («Bulwer») թիվ 891, ֆրանսիական «Բոսֆորի աստղ» («L'Etoile du Bosphore»), «Արևելքի միություն» («Union d'Orient»), իտալական «Իտալիա» («Italia») և այլ օթյակները[4]:

Դրանցից ինքնատիպ գործունեությամբ և մեծ թվով երևելի պոլսեցի նշանավոր հասարակական գործիչների և մտավորականների ընդգրկվածությամբ առանձնանում է հատկապես «Արևելքի միություն» ֆրանսախոս օթյակը: Այս օթյակը հիմնվել է Կ.Պոլսում, 1862թ. հոկտեմբերի 23-ին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի արտոնագրով: 1863թ. մարտի 23-ին տեղի է ունեցել օթյակի բացման պաշտոնական արարողությունը: Օթյակ հիմնելու գաղափարը հղացել էին բժիշկ Ալեքսանդր Շինասին և տպարանատեր Մոիզ դը Քասթրոն: Օթյակի մյուս հիմնադիրները տարբեր մասնագիտության տեր մարդիկ էին, մասնավորապես՝ վաճառական Սալոմոն դել Պորտոն, դրամատան

* Հոդվածն ընդունվել է 30.08.19:
Հոդվածը տպագրության է երաշխավորել Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանի պատմության ամբիոնը: 16.09.19:

պաշտոնյա էմանուել Ֆելիքս Վենեցիանին, լուսանկարիչ Ժան Բատիստ Տրեն և դեղագործ էդուարդ Օթթոնին[5]: «Արևելքի միության» օթյակը հիմնադրումից օրեր անց իր դռները բացեց նաև մայրաքաղաքի մյուս համայնքների անդամների, հատկապես՝ հայերի առաջ: Օթյակի հիմնադիրները նպատակ էին հետապնդում նույն հարկի տակ հավաքելու Կ.Պոլսի տարբեր համայնքների ամենաերևելի դեմքերին՝ անկախ նրանց ծագումից և կրոնական դավանանքից: Հանուն մարդկության առաջադիմության և բարօրության ստեղծված այս օթյակը «արտակարգ ընդունելութիւն գտաւ Պոլսոյ քոզմոփոլիթ շրջանակներուն մօտ» [6]:

«Արևելքի միություն» օթյակի առաջին Գերհարգելի Վարպետ ընտրվեց Ալեքսանդր Շինասին: Նա օթյակի բացման արարողության ժամանակ իր ճառում հայտարարեց. «Երկրի մը մէջ ուր զանազան ցեղերը որ կը բնակեն, անոնք մինչեւ հիմա մի միայն զիրար ատեցին, հալածեցին: Երկրի մը մէջ ուր քաղաքացիական եւ կրօնական օրենքները, զանազան միաբանութիւնները, միութիւնները դարերու ընթացքին փոխանակ զանոնք՝ ժողովուրդները, զիրար մօտեցնելու, ինչ որ պարտ էին ընել, զանոնք իրարմէ աւելի հեռացուցին: Ընկերութիւն քայքայող այս վիճակին վերջ մը տալու միակ դարմանը օթյակի մը հիմնումն էր որուն միակ նպատակը պիտի ըլլայ այս ցեղերուն իրական միացումը որպէսզի անոնք զիրար սիրեն եւ յարգեն ազատ- որմնադրության դրօշակը բարձր պահելով»[7]:

«Արևելքի միություն» օթյակի հիմնադրումից մեկ շաբաթ անց դրան անդամագրվեց «հայ ազատ որմնադրութեան ռահվիրա»[8] փաստաբան Սերովբե Ազնավուրը (1814-1890)[9]: Նա բարձրագույն կրթություն էր ստացել Անգլիայում, 1854թ. փետրվարին Լոնդոնում անդամագրվել էր «Հորդանան» («Jordan») թիվ 201 օթյակին, այնուհետև համալրել Մանչեսթրի «Odd Fellows» եղբայրական ընկերության շարքերը[10]: Ս. Ազնավուրը Կ.Պոլսում գործող անգլախոս և ֆրանսախոս մասոնական յոթ օթյակներից հինգի հիմնադիրներից էր[11], մեծ հեղինակություն էր վայելում ազատ որմնադիրների շրջանում և «կարկառուն դէմք էր Պոլսոյ և Զմյուռնիոյ մէջ» [12]:

«Արևելքի միություն» օթյակի հանդիսավոր բացմանը բացի Ս. Ազնավուրից, ներկա էին նաև օթյակի հիմնադիր հայ անդամներ թատերական գործիչ Սրապիոն Հեքիմյանը, վաճառականներ Հովհաննես Խուրտաճյանը, Միքայել Ալիշանը, Գալուստ Էքիզյանը և թարգմանիչ Հաբեթիկ Նեվրուզյանը[13]:

Նրանցից դրամատուրգ և դերասան Ս.Հեքիմյանը (1832-1892) պատմական մի շարք դրամաների հեղինակ էր, բանաստեղծ և թարգմանիչ, ում մեծ համբավ ունենալու պատճառով ժամանակակիցները համեմատում էին Շեքսպիրի, Կորնեյլի և Ալֆիերիի հետ[14]: 1865-1868թթ. Ս.Հեքիմյանը պոլսահայ առաջին արհեստավարժ «Արևելյան թատրոնի» ղեկավարն էր, պատմական մի շարք դրամաների հեղինակ: Նրա բեմադրություններին ներկա էր լինում ոչ միայն հայ համայնքի ընտրանին, այլև թուրք բարձրաստիճան շատ պաշտոնյաներ, անգամ սուլթան Աբդուլ Մեջիսը[15]: Նա միաժամանակ բարձրաստիճան մասոն էր, 1860թ. անդամագրվել էր Կ.Պոլսի առաջին անգլախոս «Արևելյան» («Oriental») թիվ 687 կանոնավոր օթյակին, դարձել այդ օթյակի վարպետ[16]: Նրա հետ միասին այդ օթյակին անդամագրվել էր նաև եվրոպական կրթություն ստացած երիտասարդ վաճառական Միքայել Ալիշանը, ով նշանավոր բանաստեղծ, բանասեր և պատմաբան Ղևոնդ Ալիշանի զարմիկն էր: Կարճ ժամանակ անց նա նույնպես դարձավ օթյակի վարպետ[17]: Հաբեթիկ Նեվրուզյանը Կ.Պոլսում ռուսական դեսպանատան թարգմանն էր, իտալական «Իտալիա» օթյակի անդամ:

Շնորհիվ նոր համալրման՝ 1862թ. վերջին «Արևելքի միություն» օթյակն ուներ 34 անդամ[18]: 1863թ. դեկտեմբերի 29-ին բժիշկ Ալ. Շինասիի փոխարեն «Արևելքի միություն» օթյակի Գերհարգելի Վարպետ ընտրվեց մի քանի օթյակների անդամ, ազատ որմնադիրների շրջանում երկար տարիներ մեծ հարգանք վայելող Ս.Ազնավուրը: 1864թ. հունվարի 14-ին նա օթյակում երդում տվեց՝ խոստանալով իր կարողություններ-

րի չափով «Լաւագոյնս ծառայել ազատ-որմնադրութեան սկզբունքներուն տարածումին»[19]: Նրա ղեկավարության մեկ տարվա ընթացքում «Արևելքի միություն» օթյակի անդամների թիվը նկատելիորեն համալրվեց և հասավ 65-ի, որոնցից 17-ը Կ.Պոլսի հայ համայնքի տարբեր բնագավառների հանրահայտ դեմքեր էին: Նրանց մի մասը մասոն դարձավ այս օթյակում, իսկ մյուսները նրանց միացան Կ.Պոլսում գործող եվրոպական այլ օթյակներից:

«Արևելքի միություն» օթյակին անդամագրված պոլսահայերը հիմնականում պետական պաշտոնյաներ և մտավորականներ էին: Նրանցից էին Օսմանյան կայսրության կրթության նախարարության պաշտոնյա Հարություն Սարաֆյանը, ծովային նախարարության թարգմաններ Թորոս բեյ Գիսակը (1825-1873) և Հովսեփ Վարդանյանը (1815-1879): Փայլուն կրթություն ստացած, բազմակողմանի զարգացած Հ.Վարդանյանը տաղանդավոր գրող էր, պատմաբան, հռչակավոր գիտնական, քաղաքագետ, խմբագիր – հրապարակախոս, «Օսմանեան խմբագրութեան մէջ առաջինը»[20]: Հ. Վարդանյանը Օսմանյան կայսրությանը մատուցած ծառայությունների համար արևմտահայերի շրջանում առաջինն է ստացել փաշայի տիտղոս, պարգևատրվել պետական բազմաթիվ շքանշաններով և պատվանշաններով: Նա գործուն մասնակցություն է ունեցել արևմտահայերի ազգային և օսմանյան սահմանադրությունների մշակմանը[21]:

Բարձրաստիճան պաշտոնյա, պետական խորհրդի անդամ Հովհաննես Նուրյանը (1839-1899) օսմանյան «Կարմիր կիսալուսնի» հիմնադիրներից էր, մեծ ներդրում ուներ այդ կազմակերպության կայացման գործում: Դրանից զատ՝ նա ազգային, հասարակական ակտիվ գործիչ էր, Կ.Պոլսի խորհրդարանական հանձնաժողովի անդամ [22]:

Կայսերական փոստ-հեռագրական ծառայության վերահսկիչ, ֆինանսների նախարարության խորհրդի անդամ Տիրան Ալի(ե)քսանյանը (1814-?) Թուրքիայի կապիտալիստների միության հիմնադիրն էր: Բարձր դռանը մատուցած ծառայությունների համար ստացել էր բեյի տիտղոս: Զբաղվել է դիվանագիտական գործունեությամբ, եղել է Բելգիայում Թուրքիայի դեսպան: Բարձրաստիճան պաշտոնյան միաժամանակ բարձրապատիվ մասոն էր, ուներ վարպետի աստիճան[23]:

«Արևելքի միություն» օթյակի երևելի անդամներից էին դիվանագետներ Էլիաս Չայանը (1840-1902) և Հարություն Տատյանը (1830-1901): Է. Չայանը Օսմանյան կայսրության ամենահարգված քաղաքական դեմքերից էր: Նա արտաքին գործերի նախարարությունում զբաղեցրել է տարբեր պաշտոններ, եղել է պետական խորհրդի անդամ, արժանացել Մեջիդիե և Օսմանիե պատվանշանների: Ղեկավարել է Կ.Պոլսի Սբ. Փրկիչ հայկական հիվանդանոցի հոգաբարձուների խորհուրդը[24]:

Հ. Տատյանը 30 տարուց ավելի արտաքին գործերի նախարարությունում զբաղեցնում էր «բացառիկ դիրք»[25], ում սուլթանը վստահում էր ամենակարևոր դիվանագիտական բանակցությունները վարելու իրավունքը: Նա «քաղաքագիտական բարձր հանճարով օժտված» դիվանագետ էր, մեծ հեղինակություն և հարգանք էր վայելում ոչ միայն Բարձր դռան և հայության շրջանում, այլ «արքունական, պետական, դեսպանական և եվրոպական շրջանակներու մէջ»[26]: Նա փաստացի տարիներ շարունակ «վարում էր Տաճկաստանի արտաքին քաղաքականությունը»[27] և այդ գործում ներդրած ավանդի համար արժանացել էր փաշայի տիտղոսի, վեզիրի աստիճանի, եվրոպական բազմաթիվ երկրների շքանշանների ու պատվանշանների[28]: Իրեն «օսմանեան պաշտոնատար և հայու զավակ» [29] համարող Հ. Տատյանը «ճշմարիտ ազգասեր հայ էր»[30], ով մեծ ծառայություններ մատուցեց հայ համայնքին՝ անդամակցելով Կենտրոնական ուսումնական խորհրդին, այնուհետև վարելով ատենապետի պաշտոնը քաղաքային ժողովում:

Հարություն Տատյանի ավագ եղբայր Ներսեսը (1825-1872) եվրոպական կրթություն ստացած բացառիկ տաղանդի տեր ճարտարագետ էր, փայլուն մեխանիկ, կա-

մուրջների և խճուղիների շինարարության փորձառու մասնագետ, մի քանի գյուտերի, մեխանիկայի ու շերամապահության մասին գրքերի հեղինակ[31]:

Փաստաբան Ավետիս Քոլոյանը ճանաչված իրավաբան էր, Ներքին գործերի նախարարության իրավախորհրդատու: Նա հետագայում դարձավ Էգեյան կղզիների քրեական դատարանի դատավոր:

«Արևելքի միություն» օթյակի անդամ էին նաև արևմտահայ մտավորականների մի ամբողջ փայլուն սերունդ: Նրանցից էին հայտնի լրագրող-հրապարակախոս, «Մասիս» թերթի երկարամյա անխոնջ խմբագիր Կարապետ Յութուճյանը, ճանաչված բժիշկներ, հասարակական գործիչներ Գրիգոր Մոզյանը, Ստեփան բեյ Ա(ր)սլանյանը, Նահապետ Ռուսինյանը, Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց), Բարունակ բեյ Ֆերուհխան Քթիկյանը, Միքայել Խորասանճյանը, Տիգրան Փեշտիմալճյանը, Հայկ Պարոնիկ Մաթևոսյանը[32]:

Արևմտահայ լիբերալ հոսանքի պարագլուխ Կ. Յութուճյանը (1823-1904) ոչ միայն «բարձր ու վսեմ» պահեց «խմբագրի կոչումը»[33], այլև երկար տարիների անխոնջ ու արգասաբեր գործունեությամբ «դարձավ անմոռանալի անուն հայ լրագրութեան, հայ դպրութեան և հայ գրականութեան մէջ»[34]: Կ.Յութուճյանը հայոց լեզվի վերանորոգիչ էր, հմուտ թարգմանիչ, «լրագրական լեզու ստեղծող»[35], ով ընդմիշտ պիտի հիշվի մեր գրական տարեգրության մեջ «իբրև երախտավոր»[36]: Նա արևմտահայության «ազգային իրավունքների ու շահերի ջերմ պաշտպան էր» [37], մեծ դերակատարում ունեցավ ազգային սահմանադրական շարժման և սահմանադրության մշակման գործում, վարեց ազգային բազմաթիվ պաշտոններ:

Բժշկագիտության դոկտոր Գ.Մոզյանը (1830-1882) Կայսերական բժշկական ընկերության և Կ.Պոլսի Սբ. Փրկիչ հիվանդանոցի հոգաբարձուների խորհրդի անդամ էր, այնուհետև ստանձնեց հիվանդանոցի բժշկապետի «բազմաչարչար պաշտոնը»: Նա ազնվագույն մարդ էր, «բազմահմուտ, բարեսիրտ ազգասեր, աղքատներու և դժբախտներու անարծաթ ու անձնուեր բժիշկը»[38]:

Բժշկագիտության դոկտոր Ստեփան բեյ Ար(ս)լանյանը (1822-1902) զինվորական հիվանդանոցի տնօրեն էր, երկար տարիներ պաշտոնավարում էր ռազմական նախարարությունում, ստացել էր հազարապետի աստիճան, փաշայի տիտղոս: Պարգևատրվել էր թուրքական և օտարերկրյա մի շարք պատվանշաններով ու շքանշաններով: Նա ճանաչված և հարգված ազգային գործիչ էր, առաջին ուսումնական խորհրդի անդամ, Հասքեոյի վարժարանի հոգաբարձու, Ազգային գերագույն ժողովի ատենադպիր: Ստ. Ար(ս)լանյանը ազգային սահմանադրական շարժման ակտիվ գործիչներից էր, Սահմանադրական գործադիր հանձնաժողովի ատենապետ, Սահմանադրական կանոնագրի վերաքննության հանձնաժողովի անդամ: Նա երկար տարիներ ազգային երեսփոխան էր, Ազգային ընդհանուր և Քաղաքացիական ժողովների ատենապետ [39]:

Սորբոնի համալսարանի շրջանավարտ, բժշկագիտության դոկտոր Ն. Ռուսինյանը (1819-1876) թեպետ զինվորական բժշկական վարժարանի դասախոս էր և Կայսերական բժշկական ժողովի անդամ, բայց ամենից առաջ ազգային գործիչ էր, օրենսդիր, բանաստեղծ, փիլիսոփա և թարգմանիչ: Նա 1848թ. ֆրանսիական հեղափոխության գաղափարակիրներից էր, որի ազդեցության տակ դարձավ ազատասեր և ազգասեր: Բարձր մտայնությամբ օժտված և գերազանցապես գաղափարի մարդ էր Ն.Ռուսինյանը, ով առաջիններից մեկը դարձավ ազգային սահմանադրական շարժման գործիչ ու գաղափարախոս: Նա Կ.Պոլսի «Ուսումնական խորհրդի» նախագահն էր, Սահմանադրության հանձնաժողովի անդամ, խմբագրեց Սահմանադրության նախագիծը և Ներքին կանոնագիրը, որն իր համախոհները «ծափերով ընդունեցին»[40]: Նա ազգային ժողովի երեսփոխան էր, այնուհետև ատենապետ, որի պարտականությունները փայլուն կատարելու համար նրան անվանում էին «հայոց Սոլոն»[41], «Ազգային ժողովների Նեստոր»[42]:

Սորբոնի և Պիզայի համալսարաններում բժշկություն ուսանած Հ. Շիշմանյանի (-Ծերենց, 1822-1888) գաղափարական աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն են թողել 1848թ. ֆրանսիական հեղափոխությունը և իտալական ազգային-ազատագրական պայքարը: Նա Փարիզում ուսանելու տարիներին Ն.Ռուսինյանի, Ն. Պալյանի, Հ.Արզումանյանի և այլ համախոհների հետ ստեղծեց «Արարատյան» ընկերությունը, որի նպատակն էր «սատարել Հայաստանի յառաջադիմութեանը»[43]: Ծերենցը Կ.Պոլսի «Բարեգործական ընկերության հիմնադիրներից էր, ազգային սահմանադրական շարժման մասնակից: Նա «ազգասեր հայ էր»[44], ակտիվորեն պայքարում էր դավանաբանական վեճերի դեմ, գլխավորում հակահասունյան շարժումը: Որպես մասն՝ Ծերենցը երազում էր այնպիսի պետական համակարգի մասին, որտեղ կգործեր հասարակության բոլոր դասերի «բարոյական միասնության» դաշինքը [45]:

Բ. Քրթիկյանը (1824-1869) զինվորական հիվանդանոցի բժշկապետ էր, Կայսերական բժշկական միության անդամ և այդ ոլորտում ունեցած ծառայությունների համար արժանացել էր բեյի տիտղոսի, պարգևատրվել Մեջիդիե պատվոնշանով: Նա ազատամիտ և ազգասեր մարդ էր, եվրոպական լուսավորության գաղափարների ջատագով: Ճանաչված բժիշկը նաև ազգային գործիչ էր և իր համախոհների հետ միասին ակտիվորեն մասնակցել է ազգային սահմանադրության մշակման աշխատանքներին: Նա իր ստորագրությամբ հաստատել էր 1860թ. ազգային սահմանադրությունը: Բ. Քրթիկյանը անդամակցել է Կ.Պոլսի պատրիարքարանի աշխարհիկ խորհրդի գործունեությանը, ընտրվել ազգային ընդհանուր ժողովի և Սահմանադրական առաջին ուսումնական խորհրդի ատենապետ[46]:

Եվրոպական փայլուն կրթություն ստացած Մ. Խորասանճյանը (1835-1903) գլխավորել է Կ.Պոլսի Սբ. Փրկիչ հիվանդանոցը և Կայսերական բժշկական միությունը, ընտրվել լուսավորության և գիտության վարչության, գիտական ընդհանուր միության անդամ: Պրոֆեսոր Մ. Խորասանճյանը տաղանդավոր և «ներհմուտ բժիշկ էր, որ իրավամբ կը կոչուեր բժիշկներու բժիշկ»[47]: Ժամանակակիցները նրան անվանում էին «ամէնէն նշանավոր հայ բժիշկը, … իր ժամանակի լավագույն և գիտականագույն բժիշկներէն մէկը»[48]: Նա հաջողություն ունեցավ նաև մասոնությունում: Հայկական «-Սեր» օթյակին անդամագրվելուց երկու տարի անց Մ.Խորասանճյանը դարձավ օթյակի վարպետ:

Բժշկագիտության դոկտոր Տ. Փեստիմալճյանը (1840-1894) Կայսերական բժշկական ընկերության նախագահն էր, Ֆրանսիայի առողջապահական ընկերության անդամ: Նա սուլթանի խորհրդատու բժիշկն էր, արժանացել է փաշայի տիտղոսի: Բժշկության մեջ, հանրային և ազգային կյանքում իր «խղճամիտ գործունեությամբ» միշտ գնահատվել է «ոչ միայն Ազգային շրջանակին մէջ, այլ բոլոր օտարազգի պաշտոնակիցներէ և հասարակութիւններէ»[49]: Երկար տարիներ ընտրվել է ազգային երեսփոխան, Քաղաքական ժողովի և վարչության անդամ [50]:

Հայկ Պարոնիկ Մաթևոսյանը նույնպես ճանաչված բժիշկ էր, Կայսերական բժշկական միության անդամ, հետագայում այդ միության նախագահը [51]:

«Արևելքի միություն» օթյակի հայ անդամներ սեղանավորներ Մարտիրոս Մյուհենտիսյանը, Պոլ Կամալիկը, Ժոզեֆ Իսկենտերյանը, վաճառական Հարություն (Արթին) Նորատունկյանը, Սերովբե Ազնավուրի որդի Անտուանը հետագայում անդամագրվեցին հայկական «Սեր» օթյակին, դարձան բարձրաստիճան մասոններ:

Ս.Ազնավուրը «Արևելյան միություն» օթյակը երկար չղեկավարեց, որը կապված էր մի շարք հանգամանքների հետ: 1864 թ. ամռանը Կ. Պոլիս եկավ «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի գերագույն խորհրդի անդամ, բարձրապատիվ մասոն Լուի Ամիաբլը[52]: Օթյակի հանձնարարությամբ նա նպատակ էր հետապնդում ուժեղացնել Ֆրանսիայի ազդեցությունը Թուրքիայում՝ հաշվի առնելով 1862թ. Զեյթունի ապստամբությունից հետո Թուրքիայում ստեղծված վիճակը, ինչպես նաև Կ.Պոլսում Անգլիայի դեսպան

Հ. Բուլվեր Լիթթոնի բավական արդյունավետ գործունեությունը: Նա հեղինակություն էր վայելում Բարձր դռանը, անձնական մտերմություն ուներ բարձրաստիճան պաշտոնյաների հետ, Կ. Պոլսում հիմնել էր «Բուլվեր», «Առաքելություն» («Areta») օթյակները, նպաստել «Տիգրան» օթյակի ստեղծմանը: Լուի Ամիաբլի բնութագրմամբ «Պուլվըր համոզուած էր թէ ազատ որմնադրութիւնը մեծ առաքելութիւն մը ունէր Մերձաւոր Արեւելքի մէջ» [53]:

Կ. Պոլսում Անգլիայի դեսպանի զբաղեցրած դիրքն ու մասոնների շրջանում ունեցած հեղինակությունը Լուի Ամիաբլին ստիպում էր հակադրվելու Հ. Բուլվեր Լիթթոնի գործունեությանը և ուղիներ փնտրելու ֆրանսիական օթյակների արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ: Դրա համար նրան անհրաժեշտ էր ամենից առաջ կանոնակարգել ֆրանսիական օթյակների գործունեությունը: Մինչդեռ դեսպան Հ. Բուլվերը բավական ճկուն դիվանագիտություն էր իրականացնում՝ փորձելով հաճոյանալ ոչ միայն Բարձր դռանը, այլև Կ.Պոլսի համայնքներին: Նա հարգալից հարաբերություններ ուներ Ս.Ազնավուրի հետ, որը երկու բարձրաստիճան մասոնների համագործակցության լավագույն օրինակ էր: Դեսպան Հ. Բուլվերը ձգտում էր թուլացնելու Ֆրանսիայի ազդեցությունը, սիրաշահելու Կ.Պոսլի հայ համայնքին և նրան դարձնելու երախտապարտ Բարձր դռանը: Նրա խորհրդին անսալով՝ սուլթան Աբդուլ Ազիզը (1830/1861-1876) հանձնարարեց մեծ եպարքոս Ալի փաշային (1815-1871) վավերացնել արևմտահայերի 1863թ. ազգային սահմանադրությունը:

Հ. Բուլվերի միջամտությամբ 1863թ. մարտին վավերացված ազգային սահմանադրությունը Կ. Պոլսի հայ համայնքի արևմտասեր շրջանակներում որոշակի ոգևորություն առաջ բերեց: Պոլսահայ մտավորականության շրջանում երկու ազգային հոսանք էր ձևավորվել: 1840-1850-ական թվականներին Ֆրանսիայում կրթություն ստացած, 1848թ. փետրվարյան հեղափոխությունը վերապրած և նրա գաղափարներով ոգևորված մտավորականներն ու հասարակական գործիչները հայության առաջընթացը կապում էին Ֆրանսիայի հետ: Մինչդեռ արևմտահայության պահպանողական և ավանդապաշտ մասը հայացքը հառել էր Անգլիային՝ հուսալով Միացյալ Թագավորության օգնությամբ տեսնել հայության վերածնունդը:

Կ.Պոլսում գործող այս ամենին իրազեկ անգլիական և ֆրանսիական օթյակները ձգտում էին իրենց կողմը գրավելու արևմտահայ մասոններին՝ հույս ունենալով նրանց միջոցով ազդել հասարակական կարծիքի վրա: Այս իմաստով 1860-ական թվականների սկզբում «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» և «Անգլիայի Մեծ Օթյակի» միջև որոշակի սառնություն էր հաստատվել: Դա միաժամանակ պայմանավորված էր նաև Աստծո գոյության և հոգու անմահության շուրջը երկու օթյակների միջև ծավալված գաղափարական վեճով: Բարձրաստիճան մասոն, «Արևելքի միություն» ֆրանսախոս օթյակի Գերհարգելի Վարպետ Ս. Ազնավուրը գաղափարական այդ վեճում պահպանում էր հավատարմություն անգլիական օթյակների կանոնադրության սկզբունքների նկատմամբ: Նա մեծ հեղինակություն էր վայելում Կ.Պոլսի մասոնների շրջանում, իսկ 1864թ. դարձավ «Իտալիայի Մեծ Արևելք» օթյակի արտոնագրով Կ. Պոլսում հիմնված «Իտալիա» օթյակի հիմնադիրներից մեկը [54]:

Ս. Ազնավուրի՝ որպես բարձրապատիվ մասոնի հեղինակությունը, առավել բարձրացավ հատկապես այն բանից հետո, երբ նա Կ.Պոլսի մի խումբ իռլանդացիների խնդրանքով նպաստեց նրանց համար օթյակի ստեղծմանը: Նա «Արևելքի միություն» օթյակի անդամ 15 անգլիացիների և իռլանդացիների անունից դիմեց «Իռլանդիայի Մեծ Օթյակի» Գերագույն խորհրդին՝ միջնորդելով Կ.Պոլսում իռլանդական օթյակ հիմնել: Նրա խնդրանքը բավարարվեց, և Բոսֆորի եվրոպական ափում հիմնվեց «Լինսթեր» («Leinster») թիվ 166 օթյակը՝ ի պատիվ «Իռլանդիայի Մեծ Օթյակի» Մեծ Վարպետ դուքս դը Լինսթերի (1791-1874) [55]:

1864թ. դեկտեմբերին Ս. Ազնավուրի և հատուկ առաքելությամբ Կ. Պոլիս եկած Լուի Ամիաբլի միջև մրցակցություն ծավալվեց «Արևելքի միություն» օթյակի Գերիարգելի Վարպետի պաշտոնի համար: Սկզբում Ս. Ազնավուրը մտադրություն չուներ իր թեկնածությունը կրկին առաջադրելու՝ վարպետ ընտրվելու համար, բայց հանգամանքները նրան հարկադրեցին մասնակցելու այդ ընտրությանը: Իր թեկնածությունն առաջադրեց նաև 27-ամյա երիտասարդ իրավագետ Լուի Ամիաբլը, ով «իր համարձակ եւ փառասէր նկարագրով շուտով գրավեց Պոլսոյ ազատ-որմնադիրներու շրջանակներուն ուշադրութիւնը»[56]: Ձայների աննշան տարբերությամբ «Արևելքի միություն» օթյակի Գերիարգելի Վարպետ ընտրվեց Լուի Ամիաբլը: Ընտրությունների մասին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի ղեկավարությանը գրած նամակում Ս. Ազնավուրը հայտնում էր, որ ընտրությանը մասնակցած օթյակի անդամների մեծ մասը քվեարկել է իր օգտին, իսկ Լուի Ամիաբլն ընտրվել է վարպետ այն բանից հետո, երբ ինքը հանել է իր թեկնածությունը: «Արևելքի միության» անդամները Ա. Շինասին և Ս. Ազնավուրին ընտրեցին օթյակի պատվավոր նախագահ՝ «ի երախտագիտութիւն ազատ-որմնադրական գաղափարաբանութեան տարածման համար անոնց կատարած գործունէութիւններուն» [57]:

Մինչև 1868թ. «Արևելքի միություն» օթյակը ղեկավարեց Լուի Ամիաբլը: Նախաձեռնող և հնարամիտ այդ երիտասարդ մասոնը թուրքական կառավարող շրջանների հետ կապերն ուժեղացնելու նպատակով «Արևելքի միություն» օթյակում ընդգրկեց նաև թուրք մտավորականների, պաշտոնյաների և զինվորականների: Նրա՝ Գերիարգելի Վարպետ եղած տարիներին օթյակին անդամագրվեցին թուրք գրող, հրապարակախոս Նամըք Քեմալը, Եգիպտոսի փոխարքայի եղբայր Մուստաֆա Ֆազլը, պետական խորհրդի նախագահ Աբդուլլահ Մեջիդը փաշան, Շիոյի կառավարիչ Մեհմեդ Ռեմսի էֆենդին, Իբրահիմ էդհեմ փաշան, Իզզեթ փաշան, սուլթան Աբդուլ Ազիզի առաջին օգնական Մեհմեդ Ռաուֆ փաշան, ինչպես նաև թուրքական առևտրական դատարանի չորս դատավորներ, բարձրաստիճան մի քանի զինվորականներ: Վերջիններիս թվում էր նաև 1862թ. Ձեյթունի սպանդը կազմակերպած Մարաշի նախկին զինվորական կառավարիչ Սիմեդ Ազիզ փաշան: Նա օթյակի անդամ դարձավ 1866թ. մարտի 27-ին: 1865թ. «Արևելքի միություն» օթյակի 127 անդամներից՝ 41-ը, իսկ 1869թ.՝ 148 անդամներից 53-ը մահմեդական էին [58]: Նրանցից ոմանք ֆրանսերենին չէին տիրապետում, որը լուրջ խոչընդոտ էր արդյունավետ աշխատանք կատարելու համար: Լուի Ամիաբլը հոգ տարավ, որ մասոնական սահմանադրությունը, օթյակի կանոնադրությունը և այլ կարևոր փաստաթղթեր թարգմանվեն թուրքերեն: Օթյակը մահմեդականներով համալրելու Լուի Ամիաբլի ջանքերը թուրքական իշխանությունները գնահատեցին հավուր պատշաճի: Բարձր դուռը նրան պարգևատրեց «Նիշան ի Իֆթիքիար» և «Մեջիդիե» կառավարական շքանշաններով:

Օթյակի Գերիարգելի Վարպետի պաշտոնում Լուի Ամիաբլը շուտով թույլ տվեց մասոնական գաղափարախոսությանը ոչ հարիր դատողություն, որը օթյակը պառակտեց: 1866թ. հունիսի 12-ին օթյակի ամսական ժողովում նա ուրացավ Տիեզերքի Մեծ Ճարատարապետի՝ Աստծո գոյությունը: Դրանով նա հակադրվում էր մասոնական գաղափարախոսության հիմնարար սկզբունքներից մեկին, ըստ որի՝ Տիեզերքի Մեծ Ճարատարապետն Աստվածն է[59]: Այս միտքն ամրագրված է «մասոնության Աստվածաշունչ» համարվող Ձեյմս Անդերսոնի «Սահմանադրությունում» և դրանից բխող մասոնական բոլոր օթյակների կանոնադրություններում:

Լուի Ամիաբլը, հակադրվելով դրանց, հայտարարեց, թե «Աստված գոյություն չունի, երբեք գոյություն չի ունեցել, և նույնիսկ եթե Աստված գոյություն ունեցած լիներ, ապա մարդկության թշնամի պիտի լիներ, թշնամի նաև առաջադիմության»[60]: Լուի Ամիաբլը կրկնում էր ֆրանսիական քաղաքական գործիչ Գյուստավ Ֆլուրանսի[61] միտքը, ով 1864թ. աթեիստական ուղղվածության դասախոսություններ կարդա-

լու համար հեռացվել էր Փարիզի «Քոլեժ դը Ֆրանսից»: Լուի Ամիաբլի հայտարարության դեմ ընդվզեցին «Արևելքի Միություն» օթյակի հատկապես հայ անդամները՝ պահանջելով նրանից վերանայել իր կարծիքը: Բայց նա շարունակեց պնդել, որ «Տիեզերքի ոչ մէկ Մեծ ճարատարապետը կը ճանչնայ, այսինքն Աստուած, եւ կ'երդնու եւ կը խոստանայ մի միայն իր պատուին վրայ» [62]:

Ազատ որմնադրության գաղափարախոսությանը և կանոնադրությանը հակադրվելու կապակցությամբ «Արևելքի Միություն» օթյակի հայ անդամները բողոք գրեցին «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի ղեկավարությանը: Բողոքն ստորագրեցին Հովսեփ Իսկենտերյանը, Մարտիրոս Մյուհենտիսյանը, Հարություն Նորատունկյանը, Գալուստ Էքիզյանը, Հարություն Սարաֆյանը, Ներսես Տատյանը, Ստեփան Գարագաշը, Եղիա Չայանը և Ն. Հագգիարին: Նրանք իրենց նամակում շեշտում էին այն միտքը, որ «օթյակը չի կարող կանոնավոր համարվել առանց Աստծո գոյության ճանաչման»: Ելնելով այս հիմնարար գաղափարից՝ նրանք պահանջում էին պատիժ սահմանել իրենց օթյակի համար, քանի որ օթյակի վարպետ Լ. Ամիաբլը թույլ է տվել հակասահմանադրական արարք[63]: Գաղափարական այս տարաձայնությունների պայմաններում «Արևելքի Միություն» օթյակի հայ անդամները՝ պետական պաշտոնյաներ է. Չայանը, Հ. Սարաֆյանը, Թ. Գիսակը, Տ. Ալի(ե)քսանյանը, բժիշկներ Ստ. Ա(ր)սլանյանը, Բ. Ֆերուիխանը, սեղանավորներ Մ. Մյուհենտիսյանը, Պ. Կամալիկը, ուսուցիչ Ժ. Իսկենտերյանը, վաճառականներ Հ. Նեվրոզյանը, Հ. Նորատունկյանը, Վ. Շիրաջյանը 1866թ. փետրվարի 22-ին Սերովբե Ազնավուրի նախաձեռնությամբ Կ. Պոլսում հիմնեցին հայկական «Սեր» օթյակը[64]:

1866թ. հուլիսի 3-ին Ս. Ազնավուրը խնդրահարույց այդ հարցով դիմեց «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակին: Նա հիշեցնում էր, որ ազատ որմնադրության սահմանադրության 29-րդ հոդվածը ճանաչում է Աստծո գոյությունը և երբեք չի ուրացել այն: Նա գրում էր. «Պետք է մերժել այն աշխարհիկ անձնավորությանը, ով մեր համոզմունքները նախապաշարմունքներ է համարում, ով մեր հավատը մեզ որպես թշնամի է ներկայացնում:» Ս. Ազնավուրը «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակի ղեկավարության ուշադրությունը հրավիրում էր այն բանի վրա, որ ֆրանսիական օթյակների սկզբունքները թույլ չեն տալիս ընդունել «աթեիստներին և աստվածապաշտներին»[65]: «Ֆրանսիայի Մեծ Արևելք» օթյակն անպատասխան թողեց Ս. Ազնավուրի և նրա համախոհ հայ ազատ որմնադիրների բողոքները: Հայ մասոնները համոզվեցին, որ ֆրանսիական մայր օթյակի ղեկավարությունը իր լռությամբ բաժանում է Լուի Ամիաբլի կարծիքը: Նա իր դիրքորոշումը չփոխեց նույնիսկ այն բանից հետո, երբ «Արևելքի Միություն» օթյակի հայ անդամները նրա հետ առանձնազրույց ունեցան և առաջարկեցին հրաժարվել իր հայտարարություններից: Լուի Ամիաբլը չզիջեց և մնաց անդրդվելի:

Ս. Ազնավուրն, ի նշան բողոքի, սպառնաց հրաժարվել «Արևելքի Միություն» օթյակի պատվավոր նախագահի պաշտոնից: Նա և օթյակի հայ անդամները «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» հետ իրենց հակամարտությունը շարունակեցին նաև որպես հայկական «Սեր» օթյակի հիմնադիր անդամներ: Նրանք Փարիզից պահանջում էին հստակ պատասխան տալ այն հարցին, թե արդյո՞ք «Արևելքի Միությունում» ստեղծված վիճակի պայմաններում իրենց օթյակը կարելի է համարել օրինական: «Ֆրանսիայի Մեծ Արևելքը» հայ մասոնների բոլոր հարցադրումները թողեց անհետևանք, նրանք Փարիզից այդպես էլ պատասխան չստացան: «Արևելքի միությունում» ճգնաժամ առաջացավ, երբ հայ անդամներից շատերը լքեցին օթյակը և անդամագրվեցին հայկական «Սեր» օթյակին: Դա թուլացրեց «Արևելքի Միություն» օթյակի կապերը Կ.Պոլսում գործող եվրոպական, հատկապես անգլիական օթյակների հետ: Օթյակը կորցրեց իր երբեմնի հանրաճանաչությունն ու գրավչությունը: 1868թ. Լուի Ամիաբլը հրաժարվեց Գերհարգելի Վարպետի պաշտոնից: Նրան փոխարինած Գերհարգելի վարպետներ Նիկոլա Բորդեանոն, այնուհետև լեհ կոմս Ստանիսլաս դե Ռոշթենը չկարողացան պահպանել

օթյակի ունեցած դիրքերը: 1867թ. «Արևելքի Միություն» օթյակը լքեց Թուրքիայում բարեփոխումների կողմնակից Մուստաֆա Ֆազլ փաշան: Նույն թվականի օգոստոսի 30-ին նա լեհ կոմս Վլադիսլավ Պլատերի, ավստրիացի Սիմոն Դեյչի և թուրքեր Նամըք Քեմալի, Աբդուլ Համիդ Զիա բեյի հետ Փարիզի իր առանձնատանն ստեղծեց «Նոր օսմաններ» մասոնական կազմակերպությունը և գլխավորեց այն[66]: Ֆազլ փաշայից հետո օթյակը լքեցին նաև մի քանի բարձրաստիճան թուրք մասոններ: 1874թ. հունվարին «Արևելքի Միություն» օթյակը «քուն մտավ»[67] և շուտով դադարեց գործելուց[68]: Չնայած «Արևելքի միություն» օթյակը համեմատաբար կարճ գործեց, բայց և այնպես նկատելի հետք թողեց Կ.Պոլսում մասոնության տարածման գործում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տե՛ս The History of Freemasonry in Turkey by RW Bro. Celil Layiktez P. Asst. G.M. www.freemasons-freemasonry.com/layiktez.html, Jamgocyan O. Les Francs-Maçons Arméniens et la Constitution de l'Arménie ottomane Constantinople 1863, Paris, 2017, p. 52.
2. Տե՛ս Պէյլէրեան Ա., Ազատ որմնադրութեան մուտքը Օսմանեան կայսրութիւն եւ Պոլսոյ հայկական «Սէր» օթեակը ԺԹ դարուն.- «Հայկազեան հայագիտական հանդես», Պէյրութ, 2001, էջ 144:
3. Պէրպէրեան Հ., Առաջին ազատ որմնադիրները Պոլսոյ եւ Զմիւռնիոյ մէջ.-«-Կեանք եւ Արուեստ», Փարիզ, 1936, փետրվար, թիվ 2, էջ 41-43, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 52-54:
4. Տե՛ս Բերբերեան Ռ., Հայ մասոնները եւ «Սէր» օթեակը Պոլսոյ մէջ.- «Հայրենիք», Բոստոն, 1937, ապրիլ, թիվ 6, էջ 128, Ֆէնէրճեան Ա., Ազատ որմնադրութիւնը մօտաւոր Արեւելքի մէջ.- «Կեանք եւ Արուեստ», Փարիզ, 1936, հոկտեմբեր, թիվ 8, էջ 128, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 152, 157, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 77-78:
5. Տե՛ս Economic et Societés I' Empire Ottoman (fin du XVIIIe-début du XXe siècle), Jean-Louis Bacqué-Grammont, Paul Dumont, p. 178, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 80, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 157
6. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 158:
7. Նույն տեղում:
8. Սիրունի Յ.Ճ., Պոլիս եւ իր դերը, երրորդ հատոր, Անթիլիաս, 1987, էջ 208:
9. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 158, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 80:
10. Բերբերյան Ռ., նշվ. աշխ., .- «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 83, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 151, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 58:
11. Տե՛ս «Հայրենիք», 1954, դեկտեմբեր, թիվ 12, էջ 95:
12. «Հայրենիք», 1955, փետրվար, թիվ 2, էջ 79, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161:
13. «Հայրենիք», 1955, հունիս, թիվ 6, էջ 92-94, Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 157, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 80, 90:
14. Այվազյան Ա., Սրապիոն Հեքիմյան. - «Թատրոն», Թիֆլիս, 1899, թիվ 1, էջ 1:
15. Ստեփանյան Հ., Հայերի ներդրումն Օսմանյան կայսրությունում, Երևան, 2012, էջ 506:
16. Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 178, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 60:
17. Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 152, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 60:
18. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 158, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 81:
19. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 158:
20. « Մասիս», 1879, թիվ 2290, « Հանդես ամսօրեայ», 1890, մարտ,թիվ 3, էջ 63:

21. Տե՛ս Զարդարեան Վ., Յիշատակարան, առաջին հատոր, Կ.Պոլիս, 1910, էջ 135-136, Գ հատոր, Գահիրե, 1934, էջ 7-23, 8-24, Ստեփանյան Հ., նշվ.աշխ., էջ 85-87:
22. Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, հ.Գ, մասն Ա, էջ 4438-4439, Մեզպուրեան Ա., Հայ և ծագումով հայ բժիշկներ, Ստանպուլ, 1950, էջ 181, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 83:
23. Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 178, Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 155, 231, 256, 266, 699:
24. Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 173, Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 262, 266, 285, 314, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 84:
25. Ա.Ն. Պութրոս Ղալի, Տատեանները (Ընտանեկան յուշեր), Գահիրե, 1981, էջ 19:
26. Օրմանեան Մ., Խոհք և խօսք, Երուսաղեմ, 1929, էջ 429-430:
27. Չերազ Մ., Կենսագրական միւսոններ, Պարիս, 1929, էջ 63, «Հայաստանի կոչ-նակ», Նյու Յորք, 1927, մարտ, թիվ 11, էջ 325:
28. Ազատեան Թ., Տատեան գերդաստանը եւ իր ականավոր դէմքերը, Իսթան-պուլ, 1952, էջ 10:
29. Չերազ Մ., նշվ. աշ., էջ 63:
30. Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 11
31. Ա.Ն. Պութրոս Ղալի, նշվ. աշխ., էջ 18, Ազատեան Թ., նշվ. աշխ., էջ 12-13:
32. Տես՝ «Հայրենիք», 1955թ., հունիս, թիվ 6, էջ 91-94, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ. էջ 158, 166, 175, Jamgocyan O., նշվ. աշխ. էջ 80-84:
33. Բերբերյան Ռ., նշվ. աշխ., .- «Հայրենիք», 1937, մայիս, թիվ 7, էջ 127:
34. Տե՛ս «Բյուզանդիոն», Կ. Պոլիս, 1904, էջ 2370-2374:
35. Պիպեռճեան Ա., Ճաշակ արդի հայ մատենագրութեան, հ. Ա, Կ.Պոլիս, 1910, Զարդարեան Վ., նշվ. աշխ., էջ 88-89:
36. Ասատուր Հ., Դիմաստուերներ, Կ. Պոլիս, 1921, էջ 62:
37. Զարդարեան Վ., նշվ. աշխ., էջ 86:
38. Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 151-152, Թէոդիկ, Ամէնուն տարեցոյցը, Փարիզ, 1912, էջ 328:
39. Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 108-115, Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 401-402, 705:
40. Ասատուր Հ.Դիմաստուերներ, էջ 67, Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 126:
41. Թևոսյան Ա., Նահապետ Ռուսինյանի աշխարհայացքը, Երևան, 1970, էջ 68:
42. «Նոր-Դար», Թիֆլիս, 1876, 16 (28) դեկտեմբերի, թիվ 1926:
43. «Արշալույս Արարատյան», Զմյուռնիա, 1850, հունիսի 28, էջ 366, «Հայաստանի կոչնակ», 1927, թիվ 11, էջ 329:
44. Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 147:
45. Նանումյան Ռ., Ծերենց, Երևան, 1961:
46. «Մասիս», 1859, դեկտեմբերի 24, թիվ 413, Զարդարեան Վ., նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 24, Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 100-103, Ստեփանյան Հ., նշվ. աշխ., էջ 381:
47. Ս.Փրկիչ Ընդհանուր Տարեցոյց, Կ.Պոլիս, 1904, էջ 421:
48. Մեզպուրեան Ա., նշվ. աշխ., էջ 188:
49. Զարդարեան Վ., նշվ. աշխ., առաջին հատոր, էջ 84:
50. Տե՛ս «Մասիս», 1900, 12 փետրվարի, թիվ 7, էջ 102:
51. Նույն տեղում:
52. Լուի Ամիաբլ (1837-1897), ֆրանսիական իրավագետ, իրավագիտության դոկ-տոր, բարձրաստիճան մասոն: 1864-1868թթ. Կ. Պոլսում ղեկավարել է ֆրան-սիական «Արևելքի միություն» օթյակը, հետագայում «Բարեռ» ընկերության առաջին նախագահն էր: 1875-1879թթ. Բարձր դռան իրավախորհրդատուն էր,

պարգևատրվել է թուրքական բարձրագույն «Նիշան ի Ֆթիքիար» և «Մեջիդիե» շքանշաններով: 1888-1891թթ. Փարիզի հինգերորդ օկրուգի քաղաքագլուխն էր: 1891թ. արժանացել է «Պատվո լեգեոն» շքանշանի: Հեղինակել է ֆրանսիական նշանավոր «Ինը քույրեր» օթյակի մասին գիրքը, որը 20-րդ դարում խիստ քննադատվել է:
Տես՝ Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 85; https:// fr.wikipedia.org /wiki/ Louis Amiable.

53. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 153:
54. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 161:
55. Նույն տեղում:
56. Նույն տեղում, էջ 162:
57. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 162, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 85:
58. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 162, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 86:
59. Տես՝.Уайт А.Э., Новая Энциклопедия масонства. Пер. с англ., Санкт Петербург-Москва-Краснодар, 2003, с 25; Карпачев С. П Масоны. словарь, М. 2008, стр. 87.
60. Jamgocyan O., նշվ. աշխ. էջ 88. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ. էջ 167:
61. Գյուստավ Ֆլուրանս (1838-1871), ֆրանսիական քաղաքական գործիչ, 1871թ. Փարիզի կոմունայի ղեկավարներից մեկը, գեներալ, հեղափոխական, բլանկիստ: 1866-1868թթ. մասնակցել է Կրետե կղզու հույների ազգային-ազատագրական պայքարին՝ ընդդեմ օսմանյան տիրապետության: 1870թ. փետրվարի 7-8-ին Փարիզում անհաջող ապստամբություն բարձրացնելուց հետո վտարանդվել է Անգլիա, մտերմացել Կառլ Մարքսի հետ, դարձել Առաջին ինտերնացիոնալի անդամ: 1870թ. սեպտեմբերի 4-ին երկրորդ կայսրության անկումից հետո, հոկտեմբերի 31-ին Օգյուստ Բլանկիի հետ ապստամբություն է բարձրացրել, մասնակցել 1871թ. հունվարի 22-ի ապստամբությանը, մարտին ընտրվել Փարիզի կոմունայի անդամ: Սպանվել է ապրիլի 3-ին՝ Վերսալը գրոհելիս: Նրա մասին տե՛ս՝ Лурье А. Я. Портреты деятелей Парижской Коммуны, М. 1956; Смирнова В. А., Г. Флуренс, М. 1972.
62. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 167, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 88:
63. Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 88, Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 167:
64. «Կեանք եւ Արուեստ», Փարիզ, 1935, էջ 73-75, «Հայրենիք», 1937, մարտ, թիվ 5, էջ 77, ապրիլ, թիվ 6, էջ 128, 1955, հունիս, թիվ 6, էջ 90-94, Պէյլերեան Ա., նշվ. աշխ., էջ 166-167, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 91:
65. Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 89:
66. Տես՝ Петросян Ю. А. Младотурецкое движение, М., 1971, стр. 69., Davison R. H. Reform on the Ottoman Empire, 1856-1876, Prinston, 1963, p. 213-215 , Жуков К. А., Поляки в Османской империи и России (60-70-е гг. XIX в.), «Проблемы национальной стратегий», М., 2015, №6 (33), стр. 201
67. Մասոնների լեզվով «քուն մտնել» նշանակում է միառժամանակ չգործել, դադար տալ:
68. Պէյլէրեան Ա., նշվ. աշխ., էջ 163, Jamgocyan O., նշվ. աշխ., էջ 90:

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կ. Պոլսի «Արևելքի միություն» օթյակը

Ֆելիքս Մովսիսյան

Օսմանյան կայսրությունում թանզիմաթի երկրորդ փուլում նոր հեռանկարներ բացվեցին քրիստոնյա ժողովուրդների հասարակական, քաղաքական, կրթական և մ-

շակութային կյանքի զարգացման գործում: Ոգևորված «Թուրքիան եվրոպականացնելու» մեծ տերությունների պահանջից և բարենորոգումներ անցկացնելու սուլթանի խոստումներից՝ անգլիական, ֆրանսիական, իտալական մեծ օթյակները Կ.Պոլսում ստեղծեցին մասոնական մի քանի օթյակներ: Դրանց թվում իր եզակի գործունեությամբ և մեծ թվով մտավորականության ընդգրկվածությամբ առանձնանում է 1862թ. հոկտեմբերին հիմնված ֆրանսախոս «Արևելքի միություն» օթյակը: Այս օթյակին անդամագրվեցին պոլսահայ մտավորականության երևելի դեմքերից շատերը, ովքեր հիմնականում ազգային, հասարակական և սահմանադրական շարժման գործիչներ էին, պետական պաշտոնյաներ, իրավաբաններ, բժիշկներ և այլն: Նրանցից շատերը 1866թ. հայ մասոնության ռահվիրա Սերովբե Ազնավուրի գլխավորությամբ անդամագրվեցին Կ. Պոլսի հայկական «Սեր» օթյակին:

РЕЗЮМЕ
Ложа «Союз Востока» Константинополя
Феликс Мовсисян

Ключевые слова: Танзимат, реформы, прогресс, масонство, союз, объединение, западные армяне, интеллигенция, ложе.

Во время второго этапа Танзимата для христианских народов Османской империи открылись новые перспективы в развитии общественной, политической, образовательной и культурной жизни. Воодушевленные требованиями крупных держав о «европеизации Турции» и обещаниями султана о проведении реформ, великие английские, французские, итальянские ложи создали в Константинополье несколько масонских лож. Среди них своей исключительной деятельностью и вовлеченностью большого количества интеллигенции выделялась франкоязычная ложа «Союз Востока», основанная в октябре 1862 года. В ряды этой ложи вступили многие видные представители армянской интеллигенции Константинополья, которые, в основном, являлись деятелями национального, общественного и конституционного движения, государственными чиновниками, юристами, врачами и т.д. Многие из них в 1866 году под руководством пионера армянского масонства Серовбе Азнавура вступили в константинопольскую армянскую ложу «Любовь».

SUMMARY
"Eastern Union" Lodge of Constantinople
Feliks Movsisyan

Key words: tanzimat, reforms, progress, Masonry, union, consolidation, Western Armenians, Intellectuals, lodge.

In the second phase of tanzimat in the Ottoman Empire new perspectives were opened in the development of social, political, educational and cultural life of Christian peoples. Inspired by the demands of the great powers to "Europeanize Turkey" and by the sultan's promise to conduct reforms, the great English, French, and Italian lodge-houses founded several Masonic lodges in Constantinople. Among them with its unique activity and large number of intellectuals was distinguished French-speaking “Eastern Union” Lodge founded in October, 1862. Many of the prominent figures of the Istanbul-Armenian intellectuals became members of this lodge, who were mainly national, public and constitutional movement figures, government officials, lawyers, doctors, and so on. Most of them led by Armenian Masonic Pioneer Serovabe Aznavour became members of Armenian lodge «Love» in Constantinople in 1866.